# Հայկ Սամսոնի Մարտիրոսյան

Ծնվել եմ 12.09.1980թ. ք. Երևանում

**Կրթություն.**

2000 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2002 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2005 թվականին Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ինձ շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

**Աշխատանքային փորձ.**

2004 թվականից աշխատում եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դասախոս, դոցենտի պաշտոնում:

2005-2009 թվականներին աշխատել եմ Հայաստանի Ֆրանսիական համալսարանում որպես դասախոս:

2005 թվականին աշխատել եմ «Իտարկո Քոնսթրաքշն» ընկերությունում որպես իրավաբան:

2008 թվականին աշխատել եմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում որպես վերահսկողական վարչության ծառայողական քննության և էթիկայի հարցերով բաժնի պետ:

2008-2013 թվականներին աշխատել եմ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունում որպես դատախազ, այնուհետև՝ ավագ դատախազ:

2010-2011 թվականներին գիտական և փորձագիտական ծառայություններ եմ մատուցել ԵԱՀԿ երևանյան գրասենյակում՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման թեմայով:

2013 թվականին նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիայի պրոֆեսորի պաշտոնում:

2013 թվականին աշխատել եմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տնտեսական վարչությունում՝ որպես գնումների համակարգման և փաստաթղթերի ձևակերպման տեսուչ:

2013 թվականին աշխատել եմ Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի աշխատակազմի ղեկավար:

2013-2015 թվականներին աշխատել եմ Երևան քաղաքի դատախազությունում որպես ավագ դատախազ:

2015-2019 թվականներին աշխատել եմ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում որպես կազմակերպական-վերլուծական բաժնի ՀԿԳ քննիչ, նաև բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

2019 թվականից իրավախորհրդատվական և փորձագիտական ծառայություններ եմ մատուցում վարչաիրավական հարաբերությունների, իրավական ակտերի փորձաքննության, ներդրումային ռիսկերի գնահատման և ներդրումների ներգրավման քաղաքականության ոլորտում:

2022 թվականից փաստաբանների պալատի անդամ եմ:

**Դասավանդում և գիտական գործունեություն.**

2003 թվականից դասավանդում եմ Հայաստանի Հանրապետության տարբեր բուհերում:

2004 թվականից դասավանդում եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության, տնտեսագիտության և այլ ֆակուլտետներում՝ Իրավաստեղծագործության հիմունքներ, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, քաղաքական և իրավական հիմունքների պատմություն, իրավագիտության հիմունքներ առարկաները:

2005-2009 թվականներին Հայաստանի Ֆրանսիական համալսարանում դասավանդել եմ եվրոպական երկրների պետության և իրավունքի պատմություն, քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն առարկաները:

2013 թվականից Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ եմ:

Հեղինակ եմ քանից ավել գիտական հոդվածների, մենագրության, ուսումնամեթոդական ձեռնարկների:

Emai